ԱՄԲԵՐԴ

ՀՊՏՀ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ արժեթղթերի և միջբանկային վարկային շուկաներ

Ամսական տեսություն
(Ապրիլ 2018)

ԵՐԵՎԱՆ 2018

Հարգելի այցելու,

ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կողմից ներկայացված Ֆինանսական շուկաների վիճակի և զարգացումների ամսական տեսությունը հրապարակվում է ամսական հաճախականությամբ և իրենից ներկայացնում է ՀՀ ֆինանսական շուկաներում իրականացված գործարքների ամփոփ վերլուծություն: Այն իր մեջ պարունակում համաշխարհային ապրանքային և ֆինանսական շուկաներում տեղի ունեցած գործընթացների ու միտումների ամփոփ տեղեկատվություն. ՀՀ մակրոտնտեսական հիմնական ամսական ցուցանիշների դիտարկում. ՀՀ ԿԲ կողմից դրամավարկային քաղաքականության ընթացքում իրականացված գործառնությունների վերաբերյալ, ինչպես նաև պետական, կորպորատիվ արժեթղթերի շուկաների և միջբանկային շուկաներում կնքված գործարքների վերաբերյալ ամփոփ վերլուծություն:

ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կողմից համաշխարհային ֆինանսական շուկաների զարգացումների վերլուծության նպատակը այս շուկաներում տեղի ունեցող գործընթացները տեսանելի դաշտում պահելն ու դրանց ազդեցությունը ՀՀ եվրոպարտատոմսերի, ՀՀ ներքին ֆինանսական շուկայի և ընդհանրապես՝ երկրի մակրոտնտեսական վիճակի վրա հասկանալն է, ինչը, նկատի ունենալով ազդեցությունների լագային(ժամանակային առումով խզված) բնույթը, կարևոր է մեր տնտեսության համար ապագա զարգացումների կանխատեսման տեսանկյունից: Մյուս կողմից՝ համաշխարհային կապիտալի շուկաներում ներդրողներ են նաև ՀՀ սուբյեկտները(ԿԲ, կենսաթոշակային ֆոնդեր, այլ ինստիտուտներ և անհատներ), ինչը ևս կարևոր է դարձնում այստեղ ընթացող զարգացումների վերլուծությունը: Այս՝ ամսական պարբերականությամբ հրապարակվող տեսությունը ամփոփում է ՀՀ եվրոպարտատոմսերի, համաշխարհային ապրանքային(մետաղներ, էներգակիրներ, պարենային ապրանքներ), արժութային(դոլարի ինդեքս, եվրո, ՌԴ ռուբլի) և կապիտալի(զարգացող և զարգացած երկրների ֆոնդային ինդեքսներ և պետական պարտատոմսերի եկամտաբերություններ) շուկաներում տեղի ունեցող զարգացումների վերլուծությունը: Ամսական տեսությունը հիմնվում է Investing.com հարթակի հրապարակած վիճակագրության վրա, իսկ վերլուծությունների հիմքում Reuters գործակալության տեղեկատվական ու վերլուծական հրապարակումներն են և սեփական դիտարկումները: ՀՀ սոցյալ տնտեսական վիճակի հետ կապված հիմնական ցուցանիշների ներկայացումը նպատակ ունի ներկայացնել ՀՀ տնտեսական ակտիվության, տնտեսության հիմնական ճյուղերի զարգացումների, սպառողական և արդյունաբերական գների ինդեքսների, արտաքին ապրանքաշրջանառության և բնակչության միջին ամսական աշխատավարձերի ընդհանուր միտումները, ինչը թույլ է տալիս գնահատել Ֆինանսական շուկաների վրա մակրոտնտեսական և սոցյալ-տնտեսական ընդհանուր վիճակի ազդեցությունները: ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականության շրջանակներում ներկայացված են ԿԲ կողմից կիրառվող անուղղակի գործիքների կիրառումը, դրանց շրջանակներում իրականացված գործարքները, ինպես նաև դրամական զանգվածի կառուցվածքը և դրանում իրականացվող փոփոխությունները: ՀՀ արտարժույթի շուկայի հետ կապված ներկայացված են ԱՄՆ դոլարի, Եվրոյի, ՌԴ ռուբլու բորսայական, արտաբորսայական, ներբանկային և միջբանկային գործարքները, ինչպես նաև ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի շուկայում իարկանացված գործառնությունները: Արժեթղթերի շուկայի

վերլուծությունը բաղկացած է պետական և կորպորատիվ արժեթղթերի շուկաների հետ կապված դիտարկումներից: Պետական պարտատոմսերի շուկայի հետ կապված ներկայացվում են առաջնայիյն շուկայում դրանց տեղաբաշխումները, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից իրականացվող հետգնումները, բորսայական և արտաբորսայական շուկաներում կնքվող գործարքները, գործակալ բանկերի կողմից բորսայական գնանշումները, ինչպես նաև պետական պարտատոմսերի եկամտաբերության կորերի փոփոխությունները: Կորպորատիվ արժեթղթերի շուկայի հետ կապված ներկայացվում են բորսայական և արտաբորսայական տեղաբաշխումները, բորսայական շուկայում կնքված գործարքները, դրանց շուկա ստեղծողների գնանշումները: Միջբանակային շուկայի վերլուծությունն իրենից ներկայացնում են միջբանկային վարկային, սվոփ և ռեպո շուկաների ամփոփ դիտարկումներ:

Ամբերդ հետազոտական կենտրոնի կողմից ֆինանսական շուկաների վիճակի և զարգացումների վերաբերյալ հրապարակվող ամփոփագրի տեղեկատվական հիմքերն են ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ Կենտրոնական Բանկի, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության, ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա ԲԲԸ հրապարակումները և վիճակագրական աղբյուրների բազաները: Ձեզ ներկայացվող վիճակագրական աղյուսակների, գծապատկերների և ներկայացվող տվյալների մի մասը նշված մարմինների կողմից օրական կտրվածքով հրապարակվող տվյալների համախմբման արդյունք են:

Սույն վիճակագրական նյութերը, վերլուծությունները և դիտարկումները ՀՊՏՀ Ամբերդ հետազոտական կենտրոնի մտավոր սեփականությունն են և դրանցից օգտվելու դեպքում հղումը կենտրոնի կայքին պարտադիր է:

«Ամբերդ» հետազոտական կենտրոն
Երևան, Նալբանդյան 128, թիվ 3 մասնաշենք Հեռ.՝ (+37410) 593-479 Էլ. հասցե՝ info@amberd.am

© ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի «Ազգային մրցունակության և միջազգայնացման հետազոտություններ» ծրագիր

Բովանդակություն

Ամփոփ տեսություն 5
1.Պետական պարտատոմսերի շուկա 8
2.Կորպորատիվ արժեթղթերի շուկաներ 20
3.Ռեպո գործարքներ 39
4.Սվոփ գործարքներ 40
5.Միջբանկային վարկային շուկա 40

Ամփոփ տեսություն

Ամփոփելով 2018թ. Ապրիլ ամսին ՀՀ արժեթղթերի և միջբանկային վարկային շուկաներում կնքված գործարքները կարող են նշել, որ.

1. Ապրիլ ամսին Ֆինանսների նախարարության կողմից իրականացվել է 20,963 մլրդ դրամի 8 տեղաբաշխում: Ընդհանուր առմամբ պարտատոմսերի պահանջարկը մոտ 1.56 անգամ գերազանցել է պահանջարկին: Իրականացված կարճաժամկետ պարտատոմսերի բոլոր աճուրդների դեպքում նախորդ ժամանակահատվածներում իրականացված տեղաբաշխումների նկատմամբ տոկոսադրույքի անկում է տեղի ունեցել, իսկ պետական երկարաժամկետ պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդի ժամանակ պահանջարկը գերազանցել է 1,45 անգամ: Աճուրդի սահմանային և միջին եկամտաբերությունները կազմել են համապատասխանաբար՝ 9,4998% և 9,3041%: Ապրիլ ամսին Ֆինանսների նախարարությունը պետական պարտատոմսերի մեկ հետգնում է իրականացրել: Հետգնվել են 19 թվականին մարվող միջնաժամկետ և 32 թվականին մարվող երկարաժամկետ պարտատոմսեր համապատասխանաբար՝ 1 մլրդ և 2 մլրդ ծավալներով:

2. Ընդհանուր առմամբ շրջանառության մեջ եղած պետական պարտատոմսերի ծավալները նախորդ ամսվա վերջի դրությամբ ապրիլ ամսին աճել են՝ միջնաժամկետի և երկարաժամկետի ծավալները կազմել են 548,5 մլրդ դրամ (աճել է մոտ 14,370 մլրդով), իսկ կարճաժամկետինը աճել է՝ կազմելով 23,681 մլրդ (աճել է 0,900 մլրդ-ով): Շրջանառության մեջ եղած կարճաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը ապրիլ ամսվա վերջին կազմել է 6.1826% (մարտի վերջին՝ 6.2519%): Միջնաժամկետ և երկարաժամկետ պետական պարտատոմսերի եկամտաբերությունը շրջանառության մեջ կազմել է 13.0635%՝ նախորդ ամսվա վերջի 13.2373%-ի փոխարեն:

3. Ապրիլ ամսին պետական պարտատոմսերի երկրորդային շուկայի արտաբորսայական հատվածում իրականացվել է 37,959 մլրդ դրամի 113 գործարք: Միջբանկային գործարքների ծավալները կազմել են կնքված գործարքների 37,1 տոկոսը՝ 14,082 մլրդ դրամ: Ֆինանսական շուկայի այլ մասնակիցների միջև կնքված գործարքների ծավալը կազմել է 23,877 մլրդ դրամ: Կնքված գործարքների 34,36 տոկոսը կնքվել է 47 թվականին մարվող պետական 30 տարեկան պարտատոմսերով, 11,88 տոկոսը՝ 36 թվականին մարվող 20 տարեկան երկարաժամկետ, 8,62 տոկոսը՝ 32 թվականին մարվող, 28,58 տոկոսը՝ 27 թվականին մարվող պետական պարտատոմսերով: Մինչև մեկ տարի մարման ժամկետայնությամբ պարտատոմսերով գործարքների ծավալը կազմել է ընդհանույր գործարքների 8,42 տոկոսը:

4. Ապրիլ ամսվա ընթացքում բորսայական շուկայում ընդհանուր առմամբ կնքվել է պետական պարտատոմսերով 5,586 մլրդ դրամի 51 գործարք: Գործարքները մարտ ամսվա ընթացքում աճել են 1,5 անգամ: Գործարքների 39.96 տոկոսը կնքվել է 22 թվականին մարվող 60 ամսական միջնաժամկետ պարտատոմսերով, 29,9 տոկոսը կնքվել են 21 թվականին մարվող 60 ամսական միջնաժամկետ պարտատոմսերով: 9,58 և 6,09 տոկոսը համապատասխանաբար կնքվել են է 47 և 27 թվականին մարվող պետական երկարաժամկետ պարտատոմսերով: 36 թվականին մարվող պարտատոմսի միջին եկամտաբերությունը կազմել է 10,9634, 47 թվականին մարվող պարտատոմսի միջին

եկամտաբերությունը՝ 11,4005%: 27թվականին մարվող պարտատոմսերի միջին եկամտաբերությունը կազմել է 9,3141 տոկո: Նախորդ ամսվա համեմատ գրեթե բոլոր պարտատոմսերի եկամտաբերությունները նվազել են:

5. Դրամային գնանշմամբ կորպորատիվ պարտատոմսերի բորսայական հարթակում կնքվել է մոտ 22,8 մլն դրամի գործարք: Ընդ որում դրամային պարտատոմսերով կնքված գործարքների ամբողջ ծավալի մոտ 37 % -ը կազմել են «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ անվանական արժեկտրոնային պարտատոմերով գործարքները: Դոլարային պարտատոմսերի շուկայի ծավալը կազմել է մոտ 1,467 մլն դոլար: Դոլարային գործարքների դեպքում "Արարատբանկ" ԲԲԸ–ի ARBKB2H բորսայական հապավմամբ արժեկտրոնային պարտատոմերով գործարքները կազմել են բոլոր գործարքների 18,5 %-ը:

6. Ապրիլ ամսին բաժնետոմսերի հարթակում կնքվել են միայն հասցեական հարթակում: Այդ գործարքները կնքվել են "Հայէկոնոմբանկ" ԲԲԸ և "Յունիբանկ" ԲԲԸ-ի հասարակ անվանական բաժնետոմսերով: Գործարքների ընդահնուր ծավալը կազմել է 7,397 մլն դրամ:

7. Արտաբորսայական ռեպո շուկայում պետական պարտատոմսերով կնքված ռեպո գործարքների ծավալը ապրիլ ամսին կազմել է 202,6 մլրդ դրամ: Գործարքների մոտ 43 %-ը կազմել են միջբանկային ռեպո գործարքները, որոնք կնքված գործարքների քանակի առումով կազմել են բոլոր գործարքների 12%-ը: Միջբանկային ռեպո գործարքների ծավալը կազմել է 128,9 մլրդ դրամ: Գործարքները կնքվել են հիմնականում մինչև 7 օր ժամկետայնությամբ: Միջբանկային ռեպոների միջին կշռված եկամտաբերությունը ամսվա ընթացքում եղել է 5,93%: Կնքված գործարքների առավելագույն և նվազագույն եկամտաբերությունները եղել են մոտ համապատասխանաբար՝ 6.00% և 5.00 %: Միջբանկային շուկայից դուրս կնքված ռեպո գործարքների ծավալը կազմել է մոտ 173.8 մլրդ դրամ: Կնքված գործարքների միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 6.44%:

8. Բորսայական ռեպո շուկայում գործարքները կնքվել են միայն կորպորատիվ պարտատոմսերով: Դրամային բորսայական ռեպոյի ծավալը կազմել է 40.439 մլն դրամ, կնքված գործարքի եկամտաբերությունը 6.5% է: Դոլարային ռեպոների ծավալը կազմել է 889.4 հազար դոլար: Գործարքները կնքվել են 15-148 օր ժամկետայնությամբ և 1.96 % միջին կշռված եկամտաբերությամբ:

9. Արտաբորսայում ընդհանուր առմամբ կնքվել են 15,540 մլն դոլարի կամ 7,465 մլրդ դրամի 32 գործարք, ընդ որում միջբանկային գործարքներ կնքվել են ինչպես միջբանկային, այնպես էլ միջբանկային շուկայից դուրս: Միջբանկային շուկայում կնքված գործարքները կազմել են բոլոր սվոփ գործարքների 25,74%-ը: Միջբանկային շուկայում կնքվել է ընդամենը մեկ գործարք՝ 4,5%-ով: Միջբանկային շուկայից դուրս կնքված գործարքների եկամտաբերությունը միջինում եղել է 3,60%, իսկ առավելագույն և նվազագույն եկամտաբերությունները համապատասխանաբար 5,00% և 2.5%:

10. Միջբանկային վարկային շուկայում ապրիլ ամսին կնքվել են 54 վարկայն գործարքներ 4 արժույթներով՝ դրամ, դոլար, եվրո և ռուբլի: Դրամային վարկերի ծավալը կազմել է մոտ 29,150 մլրդ դրամ: Գործարքները հիմնականում կնքվել են մինչև 7 օր մարման ժամկետով: Գործարքների եկամտաբերությունը կազմել է 6,00%: ԱՄՆ դոլարով միջբանկային վարկերի տոկոսադրույքները տատանվել են 1,0-3,0%-ի սահմաններում: Ընդհանուր առմամբ կնքվել են 66,700 մլն դոլարի միջբանկային վարկային 26 գործարք, որոնց միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 1,89%: Ապրիլ ամսին միջբանկային վարկային շուկայում կնքվել է եվրոյով 4 վարկային գործարք, որոնց ընդհանուր ծավալը կազմել է 9 մլն եվրո, որոնց տոկոսադրույքը կազմել է 1.00%: Ռուբլով միջբանկային վարկային շուկայում կնքվել 3 վարկային գործարք, որոնց ծավալը կազմել է 0,900 մլրդ ռուբլի, որոնց միջին եկամտաբերությունը կազմել է 4,25%:

1.Պետական պարտատոմսերի շուկա

Պետական պարտատոմսերի առաջնային շուկա

Պետական պարտատոմսերի շուկայում Ապրիլ ամսին Ֆինանսների նախարարության կողմից իրականացվել է 20,963 մլրդ դրամի 8 տեղաբաշխում:

Աղյուսակ 1.

2018 թ. Ապրիլ ամսին պետական պարտատոմսերի տեղաբաշխումները և եկամտաբերությունը

	Թողարկման համար	Մարման ամսաթիվ	Աճուրդի ամսաթիվ	Բավարարված առաջարկությունների ընդհանուր ծավալը (դրամ)	Սահմանային եկամտաբերություն	Միջին կշռված եկամտաբերությունը
1	AMGT52084192	08.04.2019	09.04.2018	1,000,000,000	6.2107	6.1552
2	AMGT52084192	08.04.2019	10.04.2018	200,000,000	6.1552	6.1552
3	AMGT52141190	14.01.2019	16.04.2018	1,000,000,000	6.1200	6.0787
4	AMGT52141190	14.01.2019	17.04.2018	200,000,000	6.0787	6.0787
5	AMGB1029A276	29.10.2027	17.04.2018	15,000,000,000	9.4998	9.3041
6	AMGB1029A276	29.10.2027	18.04.2018	2,370,000,000	9.3041	9.3041
7	AMGT5205B187	05.11.2018	23.04.2018	1,000,000,000	6.1217	6.0321
8	AMGT5205B187	05.11.2018	25.04.2018	193,700,000	6.0321	6.0321

Ընդհանուր առմամբ պարտատոմսերի պահանջարկը մոտ 1.56 անգամ գերազանցել է պահանջարկին: Իրականացված կարճաժամկետ պարտատոմսերի բոլոր աճուրդների դեպքում նախորդ ժամանակահատվածներում իրականացված տեղաբաշխումների նկատմամբ տոկոսադրույքի անկում են ունեցել : 52 շաբաթական պարտատոմսի երեք տեղաբաշխում է տեղի ունեցել: Պահանջարկը առաջին աճուրդի ժամանակ գերազանցել է առաջարկը 3,2 անգամ, իսկ երկրորդ և երրորդ տեղաբաշխումների ժամանակ համապատասխանաբար՝ 2,9 և 1,5 անգամ: Առաջին աճուրդի սահմանային և միջին եկամտաբերությունները կազմել են համապատասխանաբար 6,2107% և 6,1552%: Միջին եկամտաբերությունը նախորդ ամսվա նույն ժամկետայնության աճուրդից նվազել է 0,01 տոկոսային կետով: Կարճաժամկետ պարտատոմսերի երկրորդ աճուրդի սահմանային և միջին եկամտաբերությունները կազմել են համապատասխանաբար՝ 6,1200% և 6,0787%: Կարճաժամկետ պարտատոմսերի երրորդ տեղաբաշխման աճուրդի միջին և սահմանային եկամտաբերությունները կազմել են համապատասխանաբար՝

6,0321% և 6,0321%: Պետական երկարաժամկետ պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդի ժամանակ պահանջարկը գերազանցել է 1,45 անգամ: Աճուրդի սահմանային և միջին եկամտաբերությունները կազմել են համապատասխանաբար՝ 9,4998% և 9,3041%:

Պետական պարտատոմսերի աճուրդներին պահանջարկի մեծ ծավալը պայմանավորված է եղել մի կողմից շուկայում եկամտաբերության նվազման միտումներով՝ կապված ԿԲ կողմից դրամավարկային քաղաքականության աստիճանական մեղմացման և տոկոսադրույքների նվազեցման հետ, իսկ մյուս կողմից փետրվար ամսին պետական պարատտոմսերի և դրանց արժեկտրոնների մեծ ծավալի մարումներով:: Հաշվի առնելով այս գործոնները հաջորդ ամիսներին պետական պարտատոմսերի աճուրդները նույնպես կունենան նվազման միտում: Պարտատոմսերի նկատմամբ պահանջարկի մեծացման և եկամտաբերության նվազման վրա ազդել են նաև առևտրային բանկերի կապիտալի մեծացումը և դրա հետ կապված ազատ միջոցների ավելցուկը: Որպես եկամտաբերության աճի գործոն կարող է ազդել միայն ԿԲ կողմից դրամավարկային քաղաքականության խստացումը, ՀՀ միջազգային վարկանիշի նվազեցումը, տարածաշրջանում քաղաքական և ռազմական լարվածությունը:

Ապրիլ ամսին Ֆինանսների նախարարությունը պետական պարտատոմսերի երկու հետգնում է իրականացրել: Հետգնվել են 19 թվականին մարվող միջնաժամկետ և 32 թվականին մարվող երկարաժամկետ պարտատոմսեր համապատասխանաբար՝ 1 մլրդ և 2 մլրդ ծավալներով: Երկարաժամկետ պարտատոմսերի դեպքում հետգնման առաջարկը գերազանցել է պահանջարկը 2,2 անգամ, իսկ միջնաժամկետի դեպքում 3,5 անգամ: Հետգնման աճուրդի միջին և սահմանային եկամտաբերությունները երկարաժամկետ պարտատոմսերի դեպքում կազմել են՝ 10,3111%, իսկ միջնաժամկետի դեպքում կազմել են՝ 5,5700% և 5.6717%:

Ընդհանուր առմամբ շրջանառության մեջ եղած պետական պարտատոմսերի ծավալները նախորդ ամսվա վերջի դրությամբ ապրիլ ամսին աճել են՝ միջնաժամկետի և երկարաժամկետի ծավալները կազմել են 548,5 մլրդ դրամ (աճել է մոտ 14,370 մլրդով), իսկ կարճաժամկետինը աճել է՝ կազմելով 23,681 մլրդ (աճել է 0,900 մլրդ-ով): Շրջանառության մեջ եղած կարճաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը ապրիլ ամսվա վերջին կազմել է 6.1826% (մարտի վերջին՝ 6.2519%): Միջնաժամկետ և երկարաժամկետ պետական պարտատոմսերի եկամտաբերությունը շրջանառության մեջ կազմել է 13.0635%՝ նախորդ ամսվա վերջի 13.2373%-ի փոխարեն:

Պետական պարտատոմսերի երկրորդային շուկա

Արտաբորսայական

Ապրիլ ամսին պետական պարտատոմսերի երկրորդային շուկայի արտաբորսայական հատվածում իրականացվել է 37,959 մլրդ դրամի 113 գործարք: Միջբանկային գործարքների ծավալները կազմել են կնքված գործարքների 37,1 տոկոսը՝ 14,082 մլրդ դրամ: Ֆինանսական շուկայի այլ մասնակիցների միջև կնքված գործարքների ծավալը կազմել է 23,877 մլրդ դրամ: Կնքված գործարքների 34,36 տոկոսը կնքվել է 47 թվականին մարվող պետական 30 տարեկան պարտատոմսերով, 11,88 տոկոսը՝ 36 թվականին մարվող 20 տարեկան երկարաժամկետ, 8,62 տոկոսը՝ 32 թվականին մարվող, 28,58 տոկոսը՝ 27 թվականին մարվող պետական պարտատոմսերով: Գործարքների կենտրոնացվածության նման պատկերի պատճառը այդ պարտատոմսերով տեղաբաշխման աճուրդներն էին, ինչպես նաև շուկայի մասնակիցների մոտ այդ ժամկետայնության պարտատոմսերի նկատմամբ պահանջարկի աճը, դրանց եկամտաբերության շարունակական նվազեցումը վերջին ամիսների ընթացքում: Մինչև մեկ տարի մարման ժամկետայնությամբ պարտատոմսերով գործարքների ծավալը կազմել է ընդհանույր գործարքների 8,42 տոկոսը:

Եվրոբոնդերով արտաբորսայական շուկայում կնքվել է ընդամենը մեկ գործարք: Գործարքը կնքվել է 2020թ մարվող եվրոբոնդերով և միջբանկային շուկայից դուրս: Գործարքի եկամտաբերչությունը կազմել է 4,8321 տոկոս:

Աղյուսակ 2.

2018 թ. Ապրիլ ամսին պետական պարտատոմսերի արտաբորսայական շուկայում կնքված գործարքները

Թողարկման համար	Գործարքների ծավալ	Միջին կշռված եկամտաբերություն
AMGB30163472	13,043,640,122	11.4284%
AMGB2029A366	4,511,425,440	10.8175%
AMGB20172327	3,272,361,285	10.1681%
AMGB1029A276	10,849,840,368	9.3015%
AMGB1029A250	1,433,539,248	9.0305%
AMGB1029A235	167,591,175	8.3400%
AMGN60294219	979,429,279	7.4400%
AMGN36294202	504,904,884	7.1725%
AMGT5205B187	192,953,913	6.2900%
AMGT52043198	47,286,485	6.1667%
AMGT52141190	688,625,540	6.0301%
AMGN36294186	1,408,231,915	6.0000%
AMGN60294185	303,956,490	6.0000%
AMGT52039188	195,248,942	6.0000%
AMGT52027183	360,183,546	5.8000%
Ընդամենը	37,959,218,632	

Պետական պարտատոմսերի բորսայական շուկա

Պետական պարտատոմսերի բորսայական շուկան բավականին ակտիվ է եղել:

Աղյուսակ 3

Ապրիլ ամսվա ՆԱՍԴԱՔ Օ ԷՄ ԷՔՍ Արմենիայում պետական պարտատոմսերով կնքված գործարքները

ԾԱԾԿԱԳԻՐ	ՎԵՐՋԻՆ	ՄԻՋ	+/-	ԱՌԱՎ	ՆՎԱԶ	ԳՈՐԾ	ՔԱՆԱԿ	ԾԱՎԱԼ
AMGB1029A235	8.5	8.5	-	8.5	8.5	1	250,000,000.00	277,625,000.00
AMGB1029A276	9.35	9.3141	-	9.35	9.25	5	312,000,000.00	340,177,912.00
AMGB2029A366	11.0929	10.9634	-0.0367	11.0929	10.89	5	253,518,000.00	309,884,535.15
AMGB30163472	11.4005	11.4005	-0.0033	11.4005	11.4005	5	469,000,000.00	535,303,811.00
AMGN60294201	7	7	-	7	7	2	200,000,000.00	220,185,200.00
AMGN60294219	7.5	7.471	-	7.5	7.4301	11	1,500,000,000.00	1,670,959,700.00
AMGN60294227	8	8	-0.0021	8	8	22	2,076,000,000.00	2,232,323,444.00
					Ընդամենը.	51	5,060,518,000.00	5,586,459,602.15

Ապրիլ ամսվա ընթացքում բորսայական շուկայում ընդհանուր առմամբ կնքվել է պետական պարտատոմսերով 5,586 մլրդ դրամի 51 գործարք: Գործարքները մարտ ամսվա ընթացքում աճել են 1,5 անգամ: Գործարքների 39.96 տոկոսը կնքվել է 22 թվականին մարվող 60 ամսական միջնաժամկետ պարտատոմսերով, 29,9 տոկոսը կնքվել են 21 թվականին մարվող 60 ամսական միջնաժամկետ պարտատոմսերով: 9,58 և 6,09 տոկոսը համապատասխանաբար կնքվել են է 47 և 27 թվականին մարվող պետական երկարաժամկետ պարտատոմսերով: 36 թվականին մարվող պարտատոմսի միջին եկամտաբերությունը կազմել է 10,9634, 47 թվականին մարվող պարտատոմսի միջին եկամտաբերությունը՝ 11,4005%: 27թվականին մարվող պարտատոմսերի միջին եկամտաբերությունը կազմել է 9,3141 տոկո: Նախորդ ամսվա համեմատ գրեթե բոլոր պարտատոմսերի եկամտաբերությունները նվազել են:

Հասցեական գործարքների հարթակում 1,667 մլրդ դրամի գործարքներ են կնքվել:

Աղյուսակ 4

Ապրիլ ամսվա ՆԱՍԴԱՔ Օ ԷՄ ԷՔՍ Արմենիայում պետական պարտատոմսերով հասցեական գործարքները

ԾԱԾԿԱԳԻՐ	ՕՐ	ՄԻՋ	ԳՈՐԾ	ՔԱՆԱԿ	ԾԱՎԱԼ
AMGB1029A250	12.04.2018	9.1	1	480,000,000.00	552,901,440.00
AMGB1029A250	12.04.2018	9.1	1	7,000,000.00	8,063,146.00
AMGB1029A250	12.04.2018	9.1	1	13,000,000.00	14,974,414.00
AMGB1029A276	18.04.2018	9.2981	1	8,000,000.00	8,725,200.00
AMGB1029A276	18.04.2018	9.2981	1	992,000,000.00	1,081,924,800.00
		Ընդամենը.	5	1,500,000,000.00	1,666,589,000.00

Ապրիլ ամսին պետական արժեթղթերի շուկայում գործել են 7 գործակալ բանկեր: Գործակալները պարբերաբար ուղենիշային պարտատոմսերով գնանշումներ են կատարում նաև ֆոնդային բորսայում: Մարտ և Ապրիլ ամսիների վերջին օրերի դրությամբ ֆոնդային բորսայում գնանշումների ծավալները նույնպես ընդհանուր առմամբ վկայում են շուկայի ակտիվության մասին:

Աղյուսակ 5.

Ֆոնդային բորսայում ուղենիշային պարտատոմսերի առաջարկի և պահանջարկի եկամտաբերությունները

ԾԱԾԿԱԳԻՐ	30.03.18		27.04.18		Փոփոխությունը	
	ՊՀՋ	ՊՀՋ	ՊՀՋ	ԱՌՋ	ՊՀՋ	ԱՌՋ
AMGB1029A276	9.5951	9.25	9.5399	9.25	-0.0552	0.0000
AMGB2029A366	11.16	10.75	11.0856	10.734	-0.0744	-0.0160
AMGB30163472	11.599	11.4008	11.6	11.4	0.0010	-0.0008
AMGN36294202	7.2001	6.9501	7.2349	7	0.0348	0.0499
AMGN60294219			7.6501	7.4		
AMGN60294227	8.2033	7.98	8.2033	7.8599	0.0000	-0.1201

Բորսայում գնանշվող գրեթե բոլոր ուղենիշային պարտատոմսերի ինչպես առաջարկի, այնպես էլ պահանջարկի եկամտաբերությունները հիմնականում նվազել են: Բացառություն են կազմում 20 թվականին մարվող պարտատոմսերը:

Մարտ ամսվա վերջից ֆինանսաների նախարարությունը հարապարակել է ուղենիշային պարտատոմսերի ցանկը հաջորդ եռամսյակի համար: 2018թ Ապրիլ ուղենիշային պարտատոմսերի ցանկի մեջ ներառված են 2021 թվականին մարվող միջնաժամկետ պետական պարտատոմսերը:

Աղյուսակ 6.

Ուղենիշային պետական պարտատոմսերի ցանկը

Ուղենիշային պարտատոմսեր 01.01.18-31.03.18 ժամանակաշրջանի համար	Ուղենիշային պարտատոմսեր 01.04.18-31.06.18 ժամանակաշրջանի համար
AMGN36294194	AMGN36294202
AMGN36294202	AMGN60294219
AMGN60294227	AMGN60294227
AMGB1029A276	AMGB1029A276
AMGB2029A366	AMGB2029A366
AMGB30163472	AMGB30163472

Առաջնային և երկրորդային շուկաներում պետական պարտատոմսերի եկամտաբերությունների փոփոխություններն իրենց ազդեցությունն են ունեցել նաև եկամտաբերության կորերի վրա: Այդ ամենը դրսևորվել է հիմնականում եկամտաբերության կորերի նվազմամբ:

Գծապատկեր 1.Արժեկտրոնային պարտատոմսերի եկամտաբերության կորեր 30.03.18թ դրությամբ



Գծապատկեր 2.Արժեկտրոնային պարտատոմսերի եկամտաբերության կորեր 27.04.18թ դրությամբ



Բոլոր ժամկետայնությամբ արժեկտրոնային պարտատոմսերի եկամտաբերությունները ունեցել են նվազման միտում: Ամենամեծ նվազման միտումը դրսևորվել է առավել երկարաժամկետ պարտատոմսերի դեպքում, ինչը վկայում է դրանց վրա շուկայական եկամտաբերությունների նվազման առավել մեծ ազդեցության մասին: Պատճառը երկարաժամկետ պարտատոմսերի եկամտաբերության անկումն է երկրորդային շուկայում և դրանցով կնքված գործարքների առավել մեծ ծավալները:

Գծապատկեր 3. Զեղչատոկոսային պարտատոմսերի եկամտաբերության կոր 30.03.18թ դրությամբ



Գծապատկեր 4. Զեղչատոկոսային պարտատոմսերի եկամտաբերության կոր 27.04.18թ դրությամբ



Զեղչատոկոսային պարտատոմսերի դեպքում նույնպես եկամտաբերության կորը նվազել է: Նվազման ազդեցությունը առավել շատ դրսևորվել է առավել երկարաժամկետ պարտատոմսերի դեպքում:

Գծապատկեր 5. Պետական պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերությունների դինամիկան ապրիլ ամսվա ընթացքթում



Պետական պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերության տոկոսադրույքների տատանումների վերլուծությունը ցույց է տալիս դրանց նվազեցման միտումը:

Աղյուսակ 7.

Մինչև մարում եկամտաբերությունների վարիացիաները

	6 ամիս	*1 տարի*	*3 տարի*	*5 տարի*	*10 տարի*	*20 տարի*	*30 տարի*
1 ամիս	0.0018	0.0012	0.0012	0.0016	0.0022	0.0034	0.0040
3 ամիս	0.0103	0.0088	0.0047	0.0031	0.0071	0.0184	0.0186
1 տարի	0.0254	0.0422	0.1358	0.2138	0.2998	0.3725	0.4864
2 տարի	1.3563	1.7730	2.8883	2.9919	2.2492	1.2822	
3 տարի	5.6380	6.3491	7.6120	6.9996	4.7474	2.8311	

Վարիացիայի գործակիցների վերլուծությունը պետական պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերությունների դինամիկայի դիտարկման ժամանակ ցույց է տալիս, որ եկամտաբերության տատանումները առավել մեծ չափով եղել են առավել կարճաժամկետ

պարտատոմսերի դեպքում: Ընդ որում վարիացիայի գործակիցների ամենամեծ արժեքը եղել է 2 տարվա կտրվածքով, ինչը պայմանավորված է 2013 թվականից մինչև 2014 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ֆինանսական շուկայում եկամտաբերությունների նվազմամբ և 2014թվականի վերջից ԿԲ կողմից դրամավարկային քաղաքականության խստացման պայմաններում եկամտաբերությունների աճով: Ընդ որում ԿԲ գործիքների ազդեցությունը ավելի մեծ է եղել ավելի կարճ ժամկետայնությամբ պարտատոմսերի եկամտաբերության վրա, ինչը պայմանավորված է կարճաժամկետ միջոցների նկատմամբ շուկայի մասնակիցների կողմից պահանջարկի աճով և երկարաժամկետ հորիզոնում առավել դրական սպասումներով:

2.Կորպորատիվ արժեթղթերի շուկաներ

2018թ.-ի Ապրիլ ամսին մարվել են ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ (UNIBB1) և ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ (SWISB1) անվանական, արժեկտրոնային պարտատոմսերը:

2018թ.-ի ապրիլի 3-ին «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ-ի 5 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր անվանական արժեքով արժեկտրոնային պարտատոմսերը ցուցակվել և ընդգրկվել են ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիայի պարտատոմսերի հիմնական (Abond) ցուցակում, ինչպես նաև ցուցակման պահից թույլատրվել են նշված պարտատոմսերով հասցեական առևտուրը և ռեպո գործարքների կնքումը: Ընկերության պարտատոմսերի այս թողարկումը ներառում է 50,000 հատ անվանական, արժեկտրոնային պարտատոմս՝ 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, արժեկտրոնի 5.5% տոկոսադրույքով և 39 ամիս շրջանառության ժամկետով: Պարտատոմսերը (ISIN - AMUNIBB24ER2) բորսայում կշրջանառվեն UNIBB4 բորսայական հապավմամբ:

Նույն օրը «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ-ի 8 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր անվանական արժեքով արժեկտրոնային պարտատոմսերը ցուցակվել և ընդգրկվել են ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիայի պարտատոմսերի հիմնական (Abond) ցուցակում, ինչպես նաև ցուցակման պահից թույլատրվել են նշված պարտատոմսերով հասցեական առևտուրը և ռեպո գործարքների կնքումը: Ընկերության պարտատոմսերի այս թողարկումը ներառում է 320,000 հատ անվանական, արժեկտրոնային պարտատոմս՝ 25 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, արժեկտրոնի 5.25% տոկոսադրույքով և 51 ամիս շրջանառության ժամկետով: Պարտատոմսերը (ISIN - AMARBKB2HER3) բորսայում կշրջանառվեն ARBKB2H բորսայական հապավմամբ:

Հիմնական ցուցակում Ապրիլ ամսին եղել են 7 թողարկողի 28 պարտատոմսեր և մեկ հասարակ անվանական բաժնետոմս:

Աղյուսակ 8.
ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա բորսայի հիմնական ցուցակի արժեթղթերը

	Բորսայական հապավում	Ցուցակ	Դաս	Թողարկող
1	UNIB	A	հասարակ անվանական բաժնետոմս	«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ
2	UNIBB4	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ
3	UNIBB3	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ
4	AMRBB1	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	"Ամերիաբանկ" ՓԲԸ
5	AMRBB2	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	“Ամերիաբանկ” ՓԲԸ
6	AMRBB3	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	“Ամերիաբանկ” ՓԲԸ
7	AMRBB4	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	"Ամերիաբանկ" ՓԲԸ
8	AMRBB5	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	“Ամերիաբանկ” ՓԲԸ
9	AMRBB6	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	“Ամերիաբանկ” ՓԲԸ
10	AMRBB7	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	“Ամերիաբանկ” ՓԲԸ
11	AMRBB8	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	“Ամերիաբանկ” ՓԲԸ
12	ACBAB1	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
13	ACBAB2	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
14	BSTBB1	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	Սևծովյան Առևտրի և զարգացման Բանկ
15	NMCCB2B	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	"«Ազգային Հիփոթեքային ընկերություն» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն" ՓԲԸ
16	NMCCB2G	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	“«Ազգային Հիփոթեքային ընկերություն» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն” ՓԲԸ

17	NMCCB2H	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	“«Ազգային Հիփոթեքային ընկերություն» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն” ՓԲԸ
18	NMCCB2I	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	“«Ազգային Հիփոթեքային ընկերություն» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն” ՓԲԸ
19	ANLBB1	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	“ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ” ՓԲԸ
20	ANLBB2	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	“ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ” ՓԲԸ
21	ANLBB3	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	“ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ” ՓԲԸ
22	ANLBB4	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	“ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ” ՓԲԸ
23	ANLBB5	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	“ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ” ՓԲԸ
24	COVSB2	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«Կոնվերս բանկ» ՓԲԸ
25	COVSB3	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«Կոնվերս բանկ» ՓԲԸ
26	COVSB4	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«Կոնվերս բանկ» ՓԲԸ
27	ARBKB2G	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	“Ամերիաբանկ” ՓԲԸ
28	ARBKB2F	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
29	ARBKB2H	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ

Երկրորդային ցուցակում ցուցակված արժեթղթերի քանակը 26-ն էր, որոնցից 3-ը բաժնետոմսեր էին, իսկ 23-ը՝ 6 թողարկողի կորպորատիվ պարտատոմսեր:

Աղյուսակ 9.
ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա բորսայի երկրորդային ցուցակի արժեթղթերը

	Բորսայական հապավում	Ցուցակ	Դաս	Թողարկող
1	AHEK	B	Հասարականվանականբաժնետոմս	«ԱՐՑԱԽՀԷԿ» ԲԲԸ
2	ASEV	B	Հասարակ անվանական բաժնետոմս	«Արփա-Սևան» ԲԲԸ
3	HEZB	B	Հասարակ անվանական բաժնետոմս	«Հայաստանի էկոնոմիկայի զարգացման բանկ» ԲԲԸ
4	ARBKB2A	Bbond	Անվանականարժեկտրոնայինպարտատոմս	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
5	ARBKB2B	Bbond	Անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
6	ARBKB2C	Bbond	Անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
7	ARBKB2D	Bbond	Անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
8	ARBKB2E	Bbond	Անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
9	ARBKB8	Bbond	Անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
10	ARBKB9	Bbond	Անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
11	SWISB2	Bbond	Անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
12	SWISB3	Bbond	Անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
13	ARBKBD	Bbond	Անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
14	GLBLB3	Bbond	Անվանական արժեկտրոնային պարտատոմս	««ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ունիվերսալ վարկային կազմակերպություն» ՓԲԸ
15	GLBLB5	Bbond	Անվանական արժեկտրոնային պարտատոմս	««ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ունիվերսալ վարկային կազմակերպություն» ՓԲԸ
16	GLBLB6	Bbond	Անվանական արժեկտրոնային պարտատոմս	««ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ունիվերսալ վարկային կազմակերպություն» ՓԲԸ
17	ARBBB1	Bbond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
18	ARBBB3	Bbond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
19	ARBBB5	Bbond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
20	FNCAB1	Bbond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ՖԻՆՔԱ» Ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ
21	FNCAB2	Bbond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ՖԻՆՔԱ» Ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ

22	UNIBB2	Bbond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ՅՈՒՆԻԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերություն
23	UNIBB5	Bbond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ՅՈՒՆԻԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերություն
24	SWISB4	Bbond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
25	SWISB5	Bbond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
26	SWISB6	Bbond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ

Ազատ շուկայի հարթակում գրանցված են եղել 11 թողարկողի 6 բաժնետոմս, և 5 կորպորատիվ պարտատոմս:

Աղյուսակ 10.

ՆԱՍԴԱՔՕԷՄԷՔՍ Արմենիա բորսայի ազատ շուկայի արժեթղթերը

	Բորսայական հապավում	**Շուկա**	**Դաս**	**Թողարկող**
1	ALMS	C	Հասարակ անվանական բաժնետոմս	«Ալմաստ» ԲԲԸ
2	ARBK	C	Հասարակ անվանական բաժնետոմս	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
3	EJWG	C	Հասարակ անվանական բաժնետոմս	«Երևանիոսկերչականգործարան» ԲԲԸ
4	ESHG	C	Հասարակ անվանական բաժնետոմս	«ԵրևանիՇամպայնգինիներիգործարան» ԲԲԸ
5	EVG1	C	Հասարակ անվանական բաժնետոմս	«Երևանիոսկերչականգործարան – 1 Գնոմոն» ԲԲԸ
6	MQER	C	Հասարակ անվանական բաժնետոմս	«Մաքուրերկաթիգործարան» ԲԲԸ
7	GLBLB4	Cbond	Անվանական արժեկտրոնային պարտատոմս	««ԳԼՈԲԱԼԿՐԵԴԻՏ»ունիվերսալվարկայինկազմակերպություն» ՓԲԸ
8	ARBBB2	Cbond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	"ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ" ՓԲԸ
9	UNIB	C	Հասարակ անվանական բաժնետոմս	«ՅՈՒՆԻԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերություն
10	FMGCB1	Cbond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	Առաջին Հիփոթեքային Ընկերություն ունիվերսալ վարկային կազմակերպություն
11	FMGCB2	Cbond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	Առաջին Հիփոթեքային Ընկերություն ունիվերսալ վարկային կազմակերպություն
12	HEZBB2	Cbond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«Հայաստանի էկոնոմիկայի զարգացման բանկ» ԲԲԸ

Կորպորատիվ պարտատոմսերի շուկաներ

Ինչպես դոլարային այնպես էլ դրամային կորպորատիվ պարտատոմսերի բորսայական շրջանառությունը զգալիորեն աճել է: Դրամային գնանշմամբ կորպորատիվ պարտատոմսերի բորսայական հարթակում կնքվել է մոտ 22,8 մլն դրամի գործարք: Ընդ որում դրամային պարտատոմսերով կնքված գործարքների ամբողջ ծավալի մոտ 37 % -ը կազմել են «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ անվանական արժեկտրոնային պարտատոմերով գործարքները: Դոլարային պարտատոմսերի շուկայի ծավալը կազմել է մոտ 1,467 մլն դոլար: Դոլարային գործարքների դեպքում "Արարատբանկ" ԲԲԸ–ի ARBKB2H բորսայական հապավմամբ արժեկտրոնային պարտատոմերով գործարքները կազմել են բոլոր գործարքների 18,5 %-ը:

Աղյուսակ 11.

Կորպորատիվ պարտատոմսերով բորսայական գործարքները 2018 թ Ապրիլ ամսին

Թողարկող	Բորսայական հապավում	ՑՈՒՑ	ՎԵՐՋԻՆ	ՄԻՋ	ԱՐԺ	ԱՌԱՎ	ՆՎԱԶ	ԳՈՐԾ	ՔԱՆԱԿ	ԾԱՎԱԼ	Տեսակարար կշիռը
ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ	ACBAB2	Abond	9.1999	9.1999	AMD	9.1999	9.1999	2	82	8,459,326.64	37.0
ՅՈՒՆԻԲԱՆԿ	UNIBB5	Bbond	10	10	AMD	10	10	3	658	6,684,216.94	29.3
ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ	SWISB6	Bbond	10.9001	10.9001	AMD	10.9001	10.9001	1	128	6,974,896.64	30.5
							Ընդամենը.	7	882	22,840,143.41	100.0
ԱՄԵՐԻԱԲԱՆԿ	AMRBB6	Abond	3.2999	3.2999	EUR	3.2999	3.2999	1	99	9,914.32	100
							Ընդամենը.	1	99	9,914.32	100
ԱՄԵՐԻԱԲԱՆԿ	AMRBB4	Abond	4.8	4.7075	USD	4.8	4.7	4	1827	186,665.23	12.7
ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ	ANLBB2	Abond	6.9	6.181	USD	6.9	5.7999	6	609	61,593.40	4.2
ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ	COVSB4	Abond	5.33	5.2288	USD	5.33	4.95	7	1237	124,490.95	8.5
ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ	ANLBB5	Abond	6	6	USD	6	6	3	637	63,620.69	4.3
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2F	Abond	5.6991	5.6451	USD	5.6991	5.5854	14	4958	124,215.73	8.5

© ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի «Ազգային մրցունակության և միջազգայնացման հետազոտություններ» ծրագիր

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2H	Abond	5.5499	5.5499	USD	5.55	5.5499	30	10988	271,919.38	18.5
ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ	ANLBB1	Abond	5.7702	5.7366	USD	5.7702	5.4002	4	1069	109,941.97	7.5
ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ	COVSB2	Abond	4.9001	4.9099	USD	4.9299	4.8464	3	241	24,938.72	1.7
ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ	ANLBB4	Abond	6.15	5.7777	USD	6.15	5.6101	4	210	21,350.83	1.5
ՅՈՒՆԻԲԱՆԿ	UNIBB3	Abond	5.95	5.7338	USD	5.95	5.3	16	1591	160,068.58	10.9
ՅՈՒՆԻԲԱՆԿ	UNIBB4	Abond	5.6	5.4218	USD	5.6	5.25	7	462	46,721.93	3.2
ԱՄԵՐԻԱԲԱՆԿ	AMRBB5	Abond	4.7199	4.7199	USD	4.7199	4.7199	2	149	15,145.45	1.0
ԱՄԵՐԻԱԲԱՆԿ	AMRBB1	Abond	4.4501	4.4501	USD	4.4501	4.4501	1	100	10,223.10	0.7
ԱՄԵՐԻԱԲԱՆԿ	AMRBB8	Abond	5	5	USD	5	5	1	500	50,013.65	3.4
ՅՈՒՆԻԲԱՆԿ	UNIBB1	Abond	4.7935	4.7935	USD	4.7935	4.7935	2	164	16,725.79	1.1
ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ	ACBAB1	Abond	5.33	5.33	USD	5.33	5.33	1	55	5,554.52	0.4
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB8	Bbond	4.8131	4.4201	USD	4.8131	4.279	3	380	9,636.85	0.7
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2B	Bbond	4.8102	4.8102	USD	4.8102	4.8102	2	400	10,316.76	0.7
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2E	Bbond	5.5499	5.5499	USD	5.55	5.5499	10	2858	72,184.84	4.9
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB9	Bbond	4.3864	4.3864	USD	4.3864	4.3864	2	228	5,760.74	0.4
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2D	Bbond	5.0286	5.0287	USD	5.029	5.0286	4	596	15,431.72	1.1
ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ	GLBLB3	Bbond	6.0951	6.0951	USD	6.0951	6.0951	2	100	10,809.26	0.7
ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ	GLBLB5	Bbond	6.6901	6.7011	USD	6.7601	6.3201	6	220	22,745.61	1.6
ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ	SWISB4	Bbond	6.4923	6.2162	USD	6.4923	6.1501	3	259	27,190.34	1.9
							Ընդամենը.	137	29838	1,467,266.04	100.0

Կորպորատիվ պարտատոմսերի բորսայական գործարքների միջին կշռված եկամտաբերությունները նախորդ ամսվա վերջին գործարքների հետ համեմատած նվազել են: Հետագա ժամանակաշրջաններում պարտատոմսերի եկամտաբերությունները կարող են դրսևորել նույն նվազման միտումները՝ կապված ֆինանսական շուկաներում ԿԲ դրամավարկային քաղաքականության մեղմացման, կորպորատիվ պարտատոմսերի ներդրողների ակտիվացման հետ: Դոլարային պարտատոմսերի եկամտաբերության վրա բացասական ազդցություն կարող են ունենալ արտարժույթի շուկայում անորոշությունները և կուրսայն տատանումները:

Ինչպես Մարտին ամսին, ապրիլին ևս կորպորատիվ պարտատոմսերով հասցեական գործարքներ կնքվել են: Գործարքները կնքվել են ինչպես դոլարային, այնպես էլ եվրոյով գնանշվող պարտատոմսերով:

Աղյուսակ 12.

Կորպորատիվ պարտատոմսերով բորսայական հասցեական գործարքները 2018 թ Ապրիլ ամսին.

Թողարկող	Բորսայական հապավում	ՑՈՒՑ	ՕՐ	ՄԻՋ	ԱՐԺ	ԳՈՐԾ	ՔԱՆԱԿ	ԾԱՎԱԼ
ԱՄԵՐԻԱԲԱՆԿ	AMRBB6	Abond	03.04.2018	3.1801	EUR	1	494	49,863.32
					Ընդամենը.	1	494	49,863.32
ՅՈՒՆԻԲԱՆԿ	UNIBB3	Abond	27.04.2018	5.75	USD	1	90	9,065.90
ՅՈՒՆԻԲԱՆԿ	UNIBB3	Abond	27.04.2018	5.75	USD	1	200	20,146.44
ՅՈՒՆԻԲԱՆԿ	UNIBB3	Abond	27.04.2018	5.75	USD	1	200	20,146.44
ՅՈՒՆԻԲԱՆԿ	UNIBB4	Abond	27.04.2018	5.5	USD	1	109	11,023.08
ՅՈՒՆԻԲԱՆԿ	UNIBB4	Abond	27.04.2018	5.5	USD	1	100	10,112.92
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2H	Abond	27.04.2018	5.435	USD	1	1800	44,735.58
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2H	Abond	27.04.2018	5.4001	USD	1	399	9,928.80
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2H	Abond	27.04.2018	5.4465	USD	1	756	18,781.31
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2F	Abond	26.04.2018	5.6947	USD	1	2000	50,060.00
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2F	Abond	26.04.2018	5.6947	USD	1	1080	27,032.40
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2H	Abond	26.04.2018	5.55	USD	1	2400	59,394.24
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2F	Abond	25.04.2018	5.5854	USD	1	3200	80,384.00
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2F	Abond	25.04.2018	5.5854	USD	1	5595	140,546.40

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2F	Abond	25.04.2018	5.5854	USD	1	3200	80,384.00
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2H	Abond	25.04.2018	5.5499	USD	1	2013	49,809.47
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2H	Abond	25.04.2018	5.5499	USD	1	19976	494,284.15
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2H	Abond	25.04.2018	5.5499	USD	1	963	23,828.38
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2H	Abond	25.04.2018	5.5499	USD	1	8000	197,951.20
ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ	ANLBB5	Abond	19.04.2018	5.75	USD	1	25	2,502.71
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2H	Abond	19.04.2018	5.35	USD	1	40	1,009.10
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2H	Abond	19.04.2018	5.35	USD	1	80	2,018.19
ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ	ANLBB5	Abond	18.04.2018	5.75	USD	1	10	1,000.93
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2H	Abond	18.04.2018	5.35	USD	1	20	504.47
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2H	Abond	18.04.2018	5.35	USD	1	399	10,064.26
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2H	Abond	16.04.2018	5.3499	USD	1	300	7,564.89
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2H	Abond	13.04.2018	5.3502	USD	1	20	504.10
ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ	ANLBB5	Abond	12.04.2018	5.75	USD	1	1250	125,000.00
ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ	ANLBB5	Abond	12.04.2018	5.75	USD	1	1778	177,800.00
ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ	ANLBB5	Abond	12.04.2018	5.75	USD	1	382	38,200.00
ՅՈՒՆԻԲԱՆԿ	UNIBB4	Abond	12.04.2018	5.5	USD	1	50	5,044.97

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2H	Abond	12.04.2018	5.35	USD	1	280	7,056.39
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2H	Abond	11.04.2018	5.3498	USD	1	375	9,449.18
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2H	Abond	11.04.2018	5.3498	USD	1	414	10,431.89
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2H	Abond	10.04.2018	5.3499	USD	1	120	3,023.28
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2H	Abond	10.04.2018	5.3499	USD	1	258	6,500.05
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2H	Abond	10.04.2018	5.3499	USD	1	20	503.88
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2H	Abond	10.04.2018	5.3499	USD	1	182	4,585.31
ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ	ANLBB5	Abond	06.04.2018	5.75	USD	1	250	25,694.73
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2H	Abond	06.04.2018	5.3499	USD	1	80	2,014.33
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2H	Abond	05.04.2018	5.3499	USD	1	400	10,070.16
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2H	Abond	05.04.2018	5.3499	USD	1	36	906.31
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2H	Abond	05.04.2018	5.3499	USD	1	39	981.84
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2H	Abond	05.04.2018	5.3499	USD	1	365	9,189.02
ՅՈՒՆԻԲԱՆԿ	UNIBB3	Abond	04.04.2018	5.55	USD	1	636	64,120.38
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2H	Abond	04.04.2018	5.3499	USD	1	137	3,448.52
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2H	Abond	04.04.2018	5.3499	USD	1	228	5,739.15
ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ	ANLBB5	Abond	03.04.2018	5.75	USD	1	1365	140,227.68

ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ	ANLBB5	Abond	03.04.2018	5.75	USD	1	100	10,273.09
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2B	Bbond	27.04.2018	4.8102	USD	1	800	20,634.88
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2B	Bbond	27.04.2018	4.8102	USD	1	80	2,063.49
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2B	Bbond	27.04.2018	4.8102	USD	1	3200	82,539.52
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2B	Bbond	27.04.2018	4.6002	USD	1	5000	129,262.50
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2D	Bbond	27.04.2018	4.8003	USD	1	4000	104,043.20
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2E	Bbond	27.04.2018	5.5499	USD	1	1200	30,316.44
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2E	Bbond	27.04.2018	5.5499	USD	1	3385	85,517.62
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB8	Bbond	26.04.2018	4.5116	USD	1	120	3,042.84
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2B	Bbond	26.04.2018	5.0002	USD	1	200	5,147.38
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2B	Bbond	26.04.2018	5.0002	USD	1	400	10,294.76
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2B	Bbond	26.04.2018	4.8102	USD	1	40	1,031.61
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2E	Bbond	26.04.2018	5.5499	USD	1	1120	28,291.09
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2E	Bbond	26.04.2018	5.5499	USD	1	1400	35,363.86
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2E	Bbond	26.04.2018	5.5499	USD	1	1600	40,415.84
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2E	Bbond	26.04.2018	5.5499	USD	1	2000	50,519.80
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2E	Bbond	26.04.2018	5.5499	USD	1	1196	30,210.84

ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ	GLBLB3	Bbond	25.04.2018	6.0951	USD	1	143	15,455.95
ՖԻՆՔԱ	FNCAB1	Bbond	25.04.2018	6.0999	USD	1	766	19,607.07
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2E	Bbond	23.04.2018	5.5499	USD	1	252	6,362.60
Առաջին Հիփոթեքային Ընկերություն ունիվերսալ վարկային կազմակերպություն	FMGCB1	Cbond	07.04.2018	6.5002	USD	1	120	3,013.69
					Ընդամենը.	68	88742	2,736,178.50

Բաժնետոմսերի շուկաների բորսայական շուկա

Ապրիլ ամսին բաժնետոմսերի հարթակում կնքվել են միայն հասցեական հարթակում: Այդ գործարքները կնքվել են "Հայէկոնոմբանկ" ԲԲԸ և "Յունիբանկ" ԲԲԸ-ի հասարակ անվանական բաժնետոմսերով: Գործարքների ընդահնուր ծավալը կազմել է 7,397 մլն դրամ:

Աղյուսակ 13.

Բաժնետոմսերով հասցեական գործարքները 2018թ ապրիլ ամսին

ՀԱՊ	ՑՈՒՑ	ՕՐ	ՄԻՋ	ԱՐԺ	ԳՈՐԾ	ՔԱՆԱԿ	ԾԱՎԱԼ
HEZB	B	25.04.2018	13709	AMD	1	73	1,000,757.00
HEZB	B	23.04.2018	12000	AMD	1	4	48,000.00
HEZB	B	17.04.2018	14600	AMD	1	22	321,200.00
UNIB	C	25.04.2018	230	AMD	1	4350	1,000,500.00
UNIB	C	20.04.2018	230	AMD	1	5483	1,261,090.00
UNIB	C	19.04.2018	230	AMD	1	12021	2,764,830.00
UNIB	C	17.04.2018	230	AMD	1	4350	1,000,500.00

				Ընդամենը.	7	26303	7,396,877.00

Շուկա ստեղծողների գնանշումներ

Փետրվար ամսվա վերջի դրությամբ Ֆոնդային բորսայում գործել են կորպորատիվ պարտատոմսերի 7 շուկա ստեղծողներ: Բորսայում ցուցակված թողարկողներից 15-ի արժեթղթերն ունեն շուկա ստեղծողներ: Շուկա ստեղծող ունեցող արժեթղթերի քանակը 62 է:

Աղյուսակ 14.

Բորսայում ցուցակված արժեթղթերի շուկա ստեղծողները

Բորսայի անդամ	Շուկա ստեղծող սկսած	Հապ.	Թողարկող	Ցուցակ/ ազատ շուկա
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	28.12.2017	ARBKB2F	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ	Abond
	20.12.2017	ARBKB2G	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ	Abond
	01.08.2017	SWISB4	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ	Bbond
	01.08.2017	SWISB5	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ	Bbond
	01.08.2017	SWISB6	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ	Bbond
	14.03.2018	ACBAB2	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ»	Abond
«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ	13.03.2018	NMCCB2I	«ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՎՎԿ ՓԲԸ	Abond
	10.01.2018	AMRBB8	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	Abond
	25.12.2017	FMGCB1	ԱՀԸ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ	Cbond
	25.12.2017	FMGCB2	ԱՀԸ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ	Cbond
	24.10.2017	ACBAB1	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ»	Abond
	01.08.2017	SWISB4	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ	Bbond
	01.08.2017	SWISB5	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ	Bbond
	01.08.2017	SWISB6	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ	Bbond
	26.07.2017	AMRBB7	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	Abond
	14.07.2017	BSTBB1	ՍԱԶԲ	Abond
	12.05.2017	FNCAB2	«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ	Bbond
	13.03.2017	FNCAB1	«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ	Bbond
	08.02.2017	AMRBB3	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	Abond
	25.01.2017	AMRBB2	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	Abond

	01.07.2016	AMRBB1	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	Abond
«ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ	03.04.2018	UNIBB4	«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ	Abond
	20.03.2018	UNIBB5	«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ	Bbond
	28.02.2018	ARBBB5	«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ	Bbond
	19.12.2017	ARBBB3	«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ	Bbond
	18.12.2017	UNIBB3	«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ	Abond
	25.09.2017	ANLBB4	«ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ» ՓԲԸ	Abond
	13.06.2017	ANLBB2	«ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ» ՓԲԸ	Abond
	12.06.2017	UNIBB2	«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ	Bbond
	27.04.2017	ANLBB3	«ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ» ՓԲԸ	Abond
	31.03.2017	ARBBB2	«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ	Cbond
	10.02.2017	ARBBB1	«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ	Bbond
	25.01.2017	ANLBB1	«ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ» ՓԲԸ	Abond
	10.02.2016	UNIB	«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ	A
	26.06.2015	SWISB2	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ	Bbond
	26.06.2015	SWISB3	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ	Bbond
«ԿԱՊԻՏԱԼ ԻՆՎԵՍՏՄԵՆԹ» ՓԲԸ	18.01.2018	HEZBB3	«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ	Bbond
	18.01.2018	HEZBB2	«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ	Cbond
	18.12.2017	COVSB4	«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ	Abond
	20.09.2017	COVSB3	«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ	Abond
	26.05.2017	COVSB2	«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ	Abond
«ՖՅՈՒՋՐ ԿԱՊԻՏԱԼ ՄԱՐԿԵՏ» ՍՊԸ	14.07.2017	BSTBB1	ՍԱՀԸ	Abond
«ՌԵՆԵՍԱ» ՓԲԸ	11.12.2017	GLBLB5	«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ	Bbond
	11.12.2017	GLBLB6	«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ	Bbond
	06.12.2016	GLBLB3	«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ	Bbond
	06.12.2016	GLBLB4	«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ	Cbond
	21.11.2016	ARBKB2D	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ	Bbond
	12.08.2016	ARBKB2C	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ	Bbond
	08.07.2016	ARBKB2B	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ	Bbond
	17.07.2015	ARBKB9	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ	Bbond
	26.06.2014	ARBKB8	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ	Bbond
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ	03.04.2018	ARBKB2H	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ	Abond
	22.12.2017	ANLBB5	«ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ» ՓԲԸ	Abond
	30.11.2017	ARBKB2E	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ	Bbond

	17.10.2017	AMRBB6	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	Abond
	31.08.2017	AMRBB5	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	Abond
	20.04.2017	AMRBB4	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	Abond
	09.12.2016	NMCCB2H	«ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՎՎԿ ՓԲԸ	Abond
	24.11.2016	NMCCB2G	«ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՎՎԿ ՓԲԸ	Abond
	17.07.2014	NMCCB2B	«ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՎՎԿ ՓԲԸ	Abond
	02.04.2010	AHEK	«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ	B

Բաժնետոմսերի թողարկողներից երկուսն ունեն շուկա ստեղծողներ, "Արցախ ՀԷԿ" ԲԲԸ-ն և «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ-ն:

Աղյուսակ 17.

Բաժնետոմսերի շուկա ստեղծողների գնանշումները 27.04.18 դրությամբ.

Բորսայական հապավում	Ցուցակման մակարդակ	Պահանջարկի գին	Առաջարկի գին
UNIB	A	230	240
AHEK	B	1100	1150

Աղյուսակ 18.

Կորպորատիվ պարտատոմսերի շուկա ստեղծողների գնանշումները 27.04.18թ դրությամբ

Բորսայական հապավում	ցուցակ	արժույթ	30.03.2018		27.04.2018		փոփոխություն	
			ՊՀՋ	ԱՌՋ	ՊՀՋ	ԱՌՋ	ՊՀՋ	ԱՌՋ
NMCCB2B	Abond	AMD	6.9535	6.5036	6.9489	6.5044	-0.0046	0.0008
NMCCB2G	Abond	AMD	7.3019	6.8484	7.3022	6.8533	0.0003	0.0049
NMCCB2H	Abond	AMD	7.2986	6.8527	7.2971	6.8498	-0.0015	-0.0029
AMRBB2	Abond	AMD	9.1501	8.5997	9.1501	8.5997	0	0

© ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի «Ազգային մրցունակության և միջազգայնացման հետազոտություններ» ծրագիր

ANLBB3	Abond	AMD	10.15	9.5	10.9	10.2001	0.75	0.7001
BSTBB1	Abond	AMD	8	7.6686	8	7.6686	0	0
AMRBB7	Abond	AMD	8.1501	7.6525	8.1501	7.6525	0	0
COVSB3	Abond	AMD	10.3001	9.9001	10.5	9.9001	0.1999	0
ARBKB2G	Abond	AMD	9.555	9.0999	9.5549	9.1	-0.0001	-0.0001
NMCCB2I	Abond	AMD	8.2999	7.7934	8.3001	7.7934	0.0002	0
ACBAB2	Abond	AMD	9.2001	8.6385	9.2001	8.6385	0	0
ARBKB2C	Bbond	AMD	9.6261	9.0042	10.1478	9.4901	0.5217	0.4859
FNCAB2	Bbond	AMD	10.9	10.381	10.9	10.381	0	0
UNIBB2	Bbond	AMD	10.5501	9.9	11.17	10.4501	0.6199	0.5501
SWISB6	Bbond	AMD	11.4993	10.9	11.4992	10.9001	-0.0001	-0.0001
GLBLB6	Bbond	AMD	9.9557	9.3093	10.4821	9.8011	0.5264	0.4918
UNIBB5	Bbond	AMD	10	9.35	11	10.3001	1	0.9501
GLBLB4	Cbond	AMD	9.9559	9.3111	10.4397	9.7586	0.4838	0.4475
ARBBB2	Cbond	AMD	10.6999	10	10.9501	10.25	0.2502	0.25
FMGCB2	Cbond	AMD	10.5	9.8591	10.5	9.8591	0	0
HEZBB2	Cbond	AMD	11.4	10.6999	11.4	10.7001	0	0.0002
AMRBB6	Abond	EUR	3.3	3.18	3.3	3.18	0	0
SWISB5	Bbond	EUR	4.8133	4.5199	4.8133	4.52	0	0.0001
AMRBB1	Abond	USD	4.4499	4.279	4.4501	4.2788	0.0002	-0.0002
ANLBB1	Abond	USD	5.77	5.4	6.9499	6.5	1.1799	1.1
AMRBB3	Abond	USD	4.83	4.6444	4.83	4.6444	0	0
AMRBB4	Abond	USD	4.7001	4.5199	4.8	4.62	0.0999	0.1001
COVSB2	Abond	USD	4.9299	4.7	5.12	4.8	0.1901	0.1
ANLBB2	Abond	USD	5.77	5.4	6.9	6.45	1.13	1.05
AMRBB5	Abond	USD	4.7201	4.54	4.8199	4.6401	0.0998	0.1001
ANLBB4	Abond	USD	5.65	5.3	6.35	5.95	0.7	0.65
ACBAB1	Abond	USD	5.33	5.1361	5.5	5.2999	0.17	0.1638
COVSB4	Abond	USD	5.23	4.9299	5.33	4.9901	0.1	0.0602

UNIBB3	Abond	USD	5.7201	5.35	6.35	5.95	0.6299	0.6
ANLBB5	Abond	USD	6	5.62	6	5.62	0	0
ARBKB2F	Abond	USD	5.5875	5.3487	5.6991	5.455	0.1116	0.1063
AMRBB8	Abond	USD	5	4.8079	5	4.8079	0	0
UNIBB4	Abond	USD			6.3	5.9		
ARBKB2H	Abond	USD			5.5499	5.2		
ARBKB8	Bbond	USD	4.2805	4.0011	4.8131	4.5015	0.5326	0.5004
ARBKB9	Bbond	USD	4.3853	4.1002	4.9205	4.6004	0.5352	0.5002
SWISB2	Bbond	USD	4	3.7501	5	4.75	1	0.9999
SWISB3	Bbond	USD	4.8	4.5	5.6	5.25	0.8	0.75
ARBKB2B	Bbond	USD	4.8102	4.5002	4.5002	4.8102	-0.31	0.31
ARBKB2D	Bbond	USD	5.029	4.7003	5.0286	4.7003	-0.0004	0
GLBLB3	Bbond	USD	6.0951	5.7001	6.63	6.2001	0.5349	0.5
ARBBB1	Bbond	USD	5.85	5.5	6.15	5.75	0.3	0.25
FNCAB1	Bbond	USD	6.0998	5.8095	6.0999	5.8095	0.0001	0
SWISB4	Bbond	USD	6.5423	6.15	6.4923	6.1501	-0.05	0.0001
ARBKB2E	Bbond	USD	5.75	5.4	5.5499	5.2	-0.2001	-0.2
GLBLB5	Bbond	USD	6.7601	6.3201	7.2	6.75	0.4399	0.4299
ARBBB3	Bbond	USD	5.7201	5.35	5.6	5.25	-0.1201	-0.1
HEZBB3	Bbond	USD	5.7001	5.37	5.7	5.37	-0.0001	0
ARBBB5	Bbond	USD	6.15	5.75	6.15	5.75	0	0
FMGCB1	Cbond	USD	6.5	6.1033	6.5	6.1033	0	0

Գնանշումներում եկամտաբերությունների նվազեցումները պայմանավորված չեն եղել թողարկողների ֆինանսական վիճակներով կամ դրանց սպասումներով: Պատճառները հիմնականում պայմանավարված են եղել ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույքի հետ կապված սպասումներով և պետական պարտատոմսերի շուկայում եկամտաբերությունների նվազման միտումներով:

3.Ռեպո գործարքներ

Արտաբորսայական ռեպո շուկայում պետական պարտատոմսերով կնքված ռեպո գործարքների ծավալը ապրիլ ամսին կազմել է **202,6** մլրդ դրամ: Գործարքների մոտ **43** %-ը կազմել են միջբանկային ռեպո գործարքները, որոնք կնքված գործարքների քանակի առումով կազմել են բոլոր գործարքների **12**%-ը:

Միջբանկային ռեպո գործարքների ծավալը կազմել է 128,9 մլրդ դրամ: Գործարքները կնքվել են հիմնականում մինչև 7 օր ժամկետայնությամբ: Միջբանկային ռեպոների միջին կշռված եկամտաբերությունը ամսվա ընթացքում եղել է **5,93**%: Կնքված գործարքների առավելագույն և նվազագույն եկամտաբերությունները եղել են մոտ համապատասխանաբար՝ 6.00**%** և **5.00** %:

Միջբանկային շուկայից դուրս կնքված ռեպո գործարքների ծավալը կազմել է մոտ **173.8** մլրդ դրամ: Կնքված գործարքների միջին կշռված եկամտաբերությունը կազմել է **6.44**%: Ընդ որում ամենացածր եկամտաբերությամբ այս շուկայում սովորաբար գործարքներ են կնքվում ներդրումային ընկերությունների և բանկերի միջև: Առավելագույն եկամտաբերությունը այս ամսվա ընթացքում կազմել է **10.00**%, սակայն աննշան ծավալի պատճառով էական ազդեցություն չի գործել ընդհանուր շուկայական ծավալների վրա: Նվազագույն եկամտաբերությունը կազմել է 4.5 %:

Եվրոպարտատոմսերով ռեպոների շուկայում գործարքների ծավալը եղել է մոտ 4.369 մլրդ դրամ, ինչը 9 գործարքի արդյունք է: Միջին կշռված տոկոսադրույքը ամսվա ընթացքում կնքված գործարքների համար եղել է **3.75%:** Գործարքները կնքվել են տարբեր ժամկետներով: Միջբանկային ռեպո շուկայում եվրոբոնդերով գործարքները կազմել են բոլոր գործարքների 86.7. տոկոսը, ինչը 8 գործարքի արդյունք է:

Բորսայական ռեպո շուկայում գործարքները կնքվել են միայն կորպորատիվ պարտատոմսերով: Դրամային բորսայական ռեպոյի ծավալը կազմել է 40.439 մլն դրամ, կնքված գործարքի եկամտաբերությունը 6.5% է: Դոլարային ռեպոների ծավալը կազմել է 889.4 հազար դոլար: Գործարքները կնքվել են 15-148 օր ժամկետայնությամբ և 1.96 % միջին կշռված եկամտաբերությամբ:

4.Սվոփ գործարքներ

Բորսայական հարթակում ապրիլ ամսվա ընթացքում սվոփ գործարքներ չեն կնքվել:

Արտաբորսայում ընդհանուր առմամբ կնքվել են **15,540** մլն դոլարի կամ **7,465 մլրդ** դրամի 32 գործարք, ընդ որում միջբանկային գործարքներ կնքվել են ինչպես միջբանկային, այնպես էլ միջբանկային շուկայից դուրս: Միջբանկային շուկայում կնքված գործարքները կազմել են բոլոր սվոփ գործարքների 25,74%-ը:

Միջբանկային շուկայում կնքվել է ընդամենը մեկ գործարք՝ 4,5**%-ով:** Միջբանկային շուկայից դուրս կնքված գործարքների եկամտաբերությունը միջինում եղել է 3,60%, իսկ առավելագույն և նվազագույն եկամտաբերությունները համապատասխանաբար 5,00% և 2.5%:

Ապրիլ ամսին եվրոյով սվոփ գործարքներ չեն կնքվել:

5.Միջբանկային վարկային շուկա

Միջբանկային վարկային շուկայում Ապրիլ ամսին կնքվել են 54 վարկայն գործարքներ 4 արժույթներով՝ դրամ, դոլար, եվրո և ռուբլի: Դրամային վարկերի ծավալը կազմել է մոտ **29,150** մլրդ դրամ: Գործարքները հիմնականում կնքվել են մինչև 7 օր մարման ժամկետով: Գործարքների եկամտաբերությունը կազմել է **6,00%**:

ԱՄՆ դոլարով միջբանկային վարկերի տոկոսադրույքները տատանվել են 1,0-3,0%-ի սահմաններում: Ընդհանուր առմամբ կնքվել են 66,700 մլն դոլարի միջբանկային վարկային 26 գործարք, որոնց միջին տոկոսադրույքներըմինչև 7 օր ժամկետայնության դեպքում կազմել է **1,73**, 8-14 օր ժամկետայնության դեպքում **1,9%** , 15-28 օր ժամկետայնության դեպքում ՝ 2**%** և 1-3 ամիս ժամկետայնության դեպքում՝ 2,04 %**:** Բոլոր գործարքների միջին կշռված եկամտաբերությունը կազմել է **1,89%**

Ապրիլ ամսին միջբանկային վարկային շուկայում կնքվել է եվրոյով 4 վարկային գործարք, որոնց ընդհանուր ծավալը կազմել է 9 մլն եվրո: Գործարքները կնքվել են 1-6 ամիս ժամկետայնությամբ, իսկ տոկոսադրույքը կազմել է **1.00%:**

Ռուբլով միջբանկային վարկային շուկայում կնքվել 3 վարկային գործարք, որոնց ծավալը կազմել է 0,900 մլրդ ռուբլի: Գործարքները կնքվել են մինչև 7 օր և 15-28 օր ժամկետայնությամբ, միջին եկամտաբերությունը կազմել է **4,25%**: